իւրոյ, հատուցանելով կողոպտեալս 'ի թշնամեացէ, դարձուցանելով գերեալս, կերակրելով անկարս, դարմանելով տկարս, զարգուցանելով գաղտնի ծնեալս, զերծուցանելով բոլոր աշխարհ և ազգն հայոց 'ի լծորդութենէ ծառայութեան այլ ազգաց, պահպանելով ընդ հովանաւորութեան, և այլ ամենայն բարութիւն որպէս հաստատի օրինաց մերոց, հարկ 'ի վերայ աշխարհին և բնակողաց կայ, զի ըստ բնական բնութեան ազատի, որ ոչ կարէ յանձն 'ի վերայ իւր առնուլ պարտս և ոչ նախատինս, նոյն գունակ բոլորով սրտիւ յանձն առաք հատուցանել առ տունն հայոց, և պահպանիչն մեր, հարկ, մաքս, հաս, բաժինս, պատիւս և հնազանդութիւնս մեր ընդ Օրինաց մերոց 'ի ծննդոց բնութենէ մարդոյ, տղայիւք և պտղոյ բուսոյ բերմանէ աշխարհէն մերմէ, և 'ի ծննդոց անասնոց և գազանաց և սողնոց, ծովէ, գետօրէից և 'ի թռչնոց 'ի վերայ երկրի մերոյ, և 'ի աճմանէ գնելոյ, և վաճառելոց արդեանց, և ամենայն տուրք, բարիք և պարգևք կատարեալք որ 'ի Տեառնէ կամեցողութենէ 'ի յերկրէ մերմէ բղխի ամենայն ստացուածոց տարեկանաց ամենեքեան պարտիմք հատուցանել տասանորդս 'ի տունն հայոց առանց ձանձրանալոյ, քանզի ոչ ումեք հատուցանեմք եթէ ոչ մեզ, և ոչ ուրեք պատճառի թէ ոչ իրաւամբ և արդարութեամբ պարտս մեր։